

«ՀԱՍՏԱՏՎԱԾ»  
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ  
Խորհրդի «27» նոյեմբերի 2024թ.

թիվ 54/Լ որոշմամբ

Խորհրդի նախագահ

Գրիգոր Հովհաննիսյան \_\_\_\_\_




**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**  
**ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

Ուժի մեջ է՝ 2024թ.-ի նոյեմբերի «27»-ից

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
ԳԼՈՒԽ 2. ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ	3
ԳԼՈՒԽ 3. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻՆ	4
ԳԼՈՒԽ 4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ ԵՎ ՔՎՈՐՈՒՄԸ	4
ԳԼՈՒԽ 5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ	4
ԳԼՈՒԽ 6. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ	5
1) Ֆինանսական հաշվետվողականության ոլորտում.	5
2) Ներքին աուդիտի ոլորտում.	6
2) Արտաքին աուդիտի ոլորտում.	7
3) Ներքին հսկողության ոլորտում.	9
ԳԼՈՒԽ 7. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ	10
ԳԼՈՒԽ 8. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ	10

	<p>Կանոնադրություն Խորհրդին կից աուդիտի հանձնաժողովի</p>	<p>Կոդ: ԿՆԿ19-01 Խմբագրություն: 01 Դաս: ՆՔ Ամսաթիվ: «27» նոյեմբերի 2024թ.</p>
---	--	---

## ՆԱԽԱԲԱՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդին կից աուդիտի հանձնաժողովի կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) նպատակն է սահմանել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) Խորհրդին կից աուդիտի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) ձևավորման կարգը, Հանձնաժողովի անդամներին ներկայացվող պահանջները, նիստերի գումարման, դրանց մասնակցության կարգը, Հանձնաժողովի գործունեությունը, պատասխանատվության ոլորտները և Հանձնաժողովի նախագահի (այսուհետ՝ Նախագահ) պատասխանատվության շրջանակը:

Կանոնադրությունը պետք է կիրառվի և պահպանվի Բանկի բոլոր ղեկավարների, աշխատակիցների կողմից, ովքեր առնչվում են Բանկի Խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) և Հանձնաժողովի գործառույթների հետ:

### ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ


1. Բանկի Խորհուրդը պատվիրակել է Հանձնաժողովի Բանկի ֆինանսական հաշվետվությունների, ներքին հսկողության, օրենսդրական և կարգավորող պահանջների պահպանման, ռիսկերի կառավարման և արտաքին ու ներքին աուդիտի գործընթացների անկախ վերահսկողությունն ապահովելու գործառույթը: Հանձնաժողովի հիմնական նպատակն է աջակցել Խորհրդին իր ֆիդուցիար պարտականությունների կատարման մեջ՝ մասնավորապես, բայց չսահմանափակվելով, գնահատել հետևյալը.

- 1) ֆինանսական հաշվետվությունների, ֆինանսական արդյունքների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունների և բացահայտումների ամբողջականությունը,
- 2) ներքին աուդիտի գործառույթի և արտաքին աուդիտն իրականացնող անձի արդյունավետությունը,
- 3) ֆինանսական հաշվետվողականության նկատմամբ ներքին հսկողության համակարգերի արդյունավետությունը,
- 4) այլ հարցեր, որոնք կարող են ներկայացվել Հանձնաժողովին Խորհրդի կողմից:

### ԳԼՈՒԽ 2. ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ

2. Հանձնաժողովը (ներառյալ՝ Նախագահը) պետք է բաղկացած լինի Բանկի Խորհրդի երեք անդամից, որոնցից առնվազն մեկը պետք է լինի Բանկի Խորհրդի անկախ անդամ: Խորհրդի նախագահի և Նախագահի պաշտոնները չեն կարող համատեղվել:

3. Հանձնաժողովի առնվազն մեկ անդամը պետք է ունենա վերջին տարիների

	<p>Կանոնադրություն Խորհրդին կից աուդիտի հանձնաժողովի</p>	<p>Կոդ: ԿՆԿ19-01 Խմբագրություն: 01 Դաս: ՆՔ Ամսաթիվ: «27» նոյեմբերի 2024թ.</p>
---	--	---

համապատասխան փորձառություն ֆինանսական ոլորտում:

4. Հանձնաժողովը, որպես ամբողջություն, պետք է ունենա բավարար գիտելիքներ ֆինանսական ծառայությունների ոլորտում:
5. Նախագահը պետք է նշանակվի Խորհրդի կողմից Խորհրդի անկախ անդամների կազմից:

**ԳԼՈՒԽ 3. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻՆ**


6. Հանձնաժողովի նիստերին ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք ունեն միայն Հանձնաժողովի անդամները:
7. Հանձնաժողովը կարող է ժամանակ առ ժամանակ, իր պարտականությունների կատարմանն օժանդակելու առումով նպատակահարմար համարել Հանձնաժողովի նիստ(եր)ին հրավիրել Խորհրդի ցանկացած անդամի, գործադիր մարմնի անդամի, անկախ աուդիտ իրականացնող անձի կամ այլ անձի:
8. Հանձնաժողովի նիստերին անդամների մասնակցությունը կարող է լինել առկա կամ հեռախոսակապի/տեսազանգի միջոցով:
9. Հանձնաժողովը տարեկան առնվազն երկու անգամ պետք է առանձին հանդիպում ունենա արտաքին աուդիտ իրականացնող անձի և Բանկի Ներքին աուդիտի վարչության պետի հետ՝ առանց գործադիր մարմնի ներկայության:

**ԳԼՈՒԽ 4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ ԵՎ ՔՎՈՐՈՒՄԸ**

10. Հանձնաժողովի նիստերը գումարվում են նիստից 3 աշխատանքային օր առաջ ծանուցման պայմանով, Հանձնաժողովի կողմից որոշված հաճախականությամբ և ժամկետներում:
11. Նիստերի քվորումն առկա է երկու անդամի, ներառյալ՝ Նախագահի մասնակցության դեպքում, ընդ որում ձայները հավասար բաշխվելու դեպքում Նախագահի ձայնը որոշիչ է:
12. Հանձնաժողովի քարտուղարը նշանակվում է Բանկի Խորհրդի որոշմամբ:

**ԳԼՈՒԽ 5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ**

13. Նախագահի գործառույթը պահանջում է.
  - 1) խթանել բաց, ներառական և, անհրաժեշտության դեպքում, բարդ քննարկումներ,
  - 2) ապահովել Հանձնաժողովի կողմից իր առաջադրանքների կատարման համար անհրաժեշտ տեղեկատվության առկայությունը և բավարար ուշադրությունն իր

	<p>Կանոնադրություն Խորհրդին կից աուդիտի հանձնաժողովի</p>	<p>Կոդ: ԿՆԿ19-01 Խմբագրություն: 01 Դաս: ՆՔ Ամսաթիվ: «27» նոյեմբերի 2024թ.</p>
---	--	---


- իրավասության ներքո գտնվող հարցերին,
- 3) համակարգել Հանձնաժողովի կառավարումը՝ աջակցելով Բանկի գործադիր մարմնի որոշումների նկատմամբ հանձնաժողովի կողմից անկախ վերահսկողության իրականացմանը,
  - 4) ապահովել Ներքին աուդիտի վարչության անկախությունը և վերահսկել կատարողական արդյունքները,
  - 5) Խորհրդին զեկուցել Հանձնաժողովի գործունեության մասին:

## ԳԼՈՒԽ 6. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

14. Հանձնաժողովի պատասխանատվության ոլորտները ներառում են հետևյալը.

### 1) Ֆինանսական հաշվետվողականության ոլորտում.

- ա. մշտադիտարկել և քննադատական մոտեցմամբ գնահատել Բանկի ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև Բանկի ֆինանսական արդյունքների վերաբերյալ ցանկացած պաշտոնական հայտարարության և կիրառելի օրենսդրությամբ պահանջվող այլ տեղեկատվության ամբողջականությունը,
- բ. դիտարկել հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթները և բացահայտումների գործելակերպերը, և հաշվետու լինել Խորհրդին այդ առնչությամբ,
- գ. դիտարկել նշանակալի հաշվապահական դատողությունները և ճշգրտումները և հաշվետու լինել Խորհրդին այդ առնչությամբ,
- դ. դիտարկել Բանկի՝ գործունեության անընդհատության սկզբունքի ապահովման կարողությանն առնչվող ենթադրությունները (going concern assumptions) և կենսունակության վերաբերյալ հայտարարությունը (viability statement) (Բանկային ռիսկերի կառավարման հանձնաժողովի հետ համատեղ) և Խորհրդին ներկայացնել հավաստում Բանկի շահութաբերության վերաբերյալ,
- ե. դիտարկել Բանկի համապատասխանությունը ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներին, արժեթղթերի ցուցակման կանոններին և ֆինանսական հաշվետվողականությանն առնչվող այլ համապատասխան պահանջներին,
- զ. դիտարկել Հանձնաժողովի գործունեությանը կամ հատուկ շահ ներկայացնող ոլորտներին առնչվող՝ ցանկացած բացահայտվող տեղեկատվություն,

	<p>Կանոնադրություն Խորհրդին կից աուդիտի հանձնաժողովի</p>	<p>Կոդ: ԿՆԿ19-01 Խմբագրություն: 01 Դաս: ՆՔ Ամսաթիվ: «27» նոյեմբերի 2024թ.</p>
---	--	---

- է. դիտարկել ՀՀ կենտրոնական բանկի պարզաբանումները, շրջաբերականները, առաջարկները և հանձնարարականները,
- ը. դիտարկել Բանկի գործադիր մարմնի կողմից ներդրված մեխանիզմները՝ ֆինանսական հաշվետվողականության գծով կիրառելի օրենսդրական նորմատիվ ակտերին և առաջատար փորձի պահանջներին, ներառյալ՝ կարգավորող մարմնի պահանջներին և առաջարկություններին՝ համապատասխանության ապահովման ուղղությամբ,
- թ. դիտարկել Ներքին աուդիտի վարչության, այլ ստորաբաժանումների/անձի և արտաքին աուդիտ իրականացնող անձի առաջարկությունները,
- ժ. դիտարկել ցանկացած էական կամ արտասովոր խնդիր, որն արտաքին աուդիտ իրականացնող անձն անհրաժեշտ է համարում ընդգծել տարեկան հաշվետվության մեջ,
- ժա. գնահատել Ֆինանսական գործառույթի ռեսուրսների և փորձառության, ինչպես նաև փոխարինելիության պլանավորման պատշաճության աստիճանը,
- ժբ. տեղեկացնել Խորհրդին, թե արդյոք տարեկան հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվությունները, ընդհանուր առմամբ, արդար, հավասարակշռված և հասկանալի են ներկայացված, և պարունակում են Բանկի վիճակի և կատարողական արդյունքների, բիզնես մոդելի և ռազմավարության գնահատման համար բաժնետերերին անհրաժեշտ տեղեկությունները,
- ժգ. հաշվետու լինել Խորհրդին ֆինանսական հաշվետվությունների առնչությամբ կիրառելի կորպորատիվ կառավարման կանոնակարգերին կամ ստանդարտներին՝ Բանկի համապատասխանության մասին,
- ժդ. հավաստիացում տրամադրել Խորհրդին ֆինանսական հաշվետվություններին առնչվող իրավակարգավորումներին՝ Բանկի համապատասխանության մասին:

**2) Ներքին աուդիտի ոլորտում.**


- ա. դիտարկել և նախնական հավանություն տալ Բանկի Ներքին աուդիտի վարչության կանոնադրությանը,
- բ. վերահսկել Ներքին աուդիտի վարչության աշխատանքները, ինչպես նաև նախնական հավանություն տալ Ներքին աուդիտի վարչության պետի և անդամների նշանակմանը կամ ազատմանը,
- գ. մշտադիտարկել և գնահատել Ներքին աուդիտի վարչության

արդյունավետությունը (ներառյալ՝ առնվազն 5 տարին մեկ անգամ արտաքին գնահատման միջոցով), կատարողական արդյունքները, ռեսուրսները, անկախությունը և կարգավիճակը,

- դ. դիտարկել Ներքին աուդիտի վարչության կողմից կատարված էական բացահայտումները և Բանկի գործադիր մարմնի պատասխանը,
- ե. նախնական հավանություն տալ Ներքին աուդիտի վարչության բյուջեին և տարեկան աշխատանքային պլանին (ներառյալ՝ տարվա ընթացքում պլանի էական փոփոխություններին),
- զ. համոզվածություն ձեռք բերել առ այն, որ Ներքին աուդիտի վարչության աշխատանքային պլանը համապատասխանում է Բանկի գործունեության առանցքային ռիսկերին,
- է. համոզվածություն ձեռք բերել առ այն, որ առկա է գործունեության պատշաճ համակարգում Ներքին աուդիտի վարչության և արտաքին աուդիտ իրականացնող անձի միջև,

## 2) Արտաքին աուդիտի ոլորտում.


- ա. գործադրել Բանկի քաղաքականության (այդ թվում՝ Կորպորատիվ կառավարման) պահանջներն ըստ կիրառելիության՝ ներառյալ անցկացնել մրցույթ և Խորհրդին ներկայացնել առաջարկություններ արտաքին աուդիտն իրականացնող անձի նշանակման, վերանշանակման կամ ազատման վերաբերյալ, վերջինիս կողմից դրանք տարեկան ընդհանուր ժողովում բաժնետերերի հաստատմանը ներկայացնելու նպատակով, ինչպես նաև նախնական հավանություն տալ արտաքին աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափի, ծառայության շրջանակի և պայմանների վերաբերյալ,
- բ. վերահսկել Բանկի գործադիր մարմնի կողմից ոչ աուդիտորական ծառայությունների մատուցման համար արտաքին աուդիտ իրականացնող անձի՝ ներգրավման քաղաքականության կիրառումը՝ հաշվի առնելով կիրառելի օրենսդրության պահանջները,
- գ. նախապես հավանություն տալ արտաքին աուդիտ իրականացնող անձի կողմից ցանկացած ոչ աուդիտորական ծառայությունների մատուցման վերաբերյալ, մասնավորապես,
  - դիտարկել դրանց ազդեցությունն արտաքին աուդիտ իրականացնող անձի անկախության վրա,
  - հաշվի առնել համապատասխան իրավական ակտերի և այս առնչությամբ

	<p>Կանոնադրություն Խորհրդրին կից աուդիտի հանձնաժողովի</p>	<p>Կոդ: ԿՆԿ19-01 Խմբագրություն: 01 Դաս: ՆՔ Ամսաթիվ: «27» նոյեմբերի 2024թ.</p>
---	---	---

առկա էթիկական ուղեցույցների պահանջները,

- արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ համաձայնեցնել ծառայությունների շրջանակները և պայմանները,
  - արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ համաձայնեցնել ցանկացած նման ծառայության վճարները, ինչպես նաև Խորհրդրին իրազեկել բարելավման կամ գործողությունների ձեռնարկման անհրաժեշտության մասին,
- դ. դիտարկել և մշտադիտարկել արտաքին աուդիտ իրականացնող անձի անկախությունը, օբյեկտիվությունը, աուդիտի որակը և արդյունավետությունը՝ հաշվի առնելով համապատասխան մասնագիտական, օրենսդրական և այլ պահանջները,
- ե. վերահսկել աուդիտի գործընկերների/արտաքին աուդիտ իրականացնող անձանց փոխարինելիությունը,
- զ. դիտարկել աուդիտի առաջընթացի վերաբերյալ արտաքին աուդիտ իրականացնող անձի հաշվետվությունը, «նամակ դեկավարությանը» փաստաթուղթը, արտաքին աուդիտ իրականացնող անձի կողմից դեկավարությանն ուղղված ցանկացած էական հարցադրումները և դրանց պատասխանները: Ցանկացած էական ռիսկ կամ ներքին հսկողության հետ կապված խնդիրները (բացի ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ներքին հսկողության հետ կապված հարցերի), ըստ անհրաժեշտության, պետք է փոխանցվեն Բանկի ռիսկերի կառավարման հանձնաժողովին,
- է. արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ քննարկել աուդիտի իրականացման ընթացքում աուդիտորական աշխատանքների մոտեցումը, բնույթը և շրջանակը, և հաշվետվողական պարտավորությունները, ներառյալ,
- հաշվապահական հաշվառման և աուդիտի առնչությամբ էական խնդիրները և վերապահումները,
  - նշանակալի դատողություններ պահանջող ոլորտները,
  - հաշվապահական հաշվառման այլընտրանքային մոտեցումները, ինչպես նաև դրանց հնարավոր հետևանքները,
  - հաշվապահական հաշվառման ցանկացած էական ճշգրտումները,
  - գործունեության անընդհատության սկզբունքի ապահովման կարողությանն առնչվող ենթադրությունները (going concern assumptions)




	<p>Կանոնադրություն Խորհրդին կից աուդիտի հանձնաժողովի</p>	<p>Կոդ: ԿՆԿ19-01 Խմբագրություն: 01 Դաս: ՆՔ Ամսաթիվ: «27» նոյեմբերի 2024թ.</p>
---	--	---

և կենսունակության վերաբերյալ հայտարարությունը (viability statement).

- ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներին, ֆոնդային բորսայի կանոններին և իրավական պահանջներին համապատասխանությունը,
  - վերադասակարգումները կամ առաջարկվող լրացուցիչ բացահայտումները,
  - հաշվապահական հաշվառման քաղաքականության և գործելակերպերի ցանկացած էական փոփոխություն, արտաքին աուդիտ իրականացնող անձի կողմից ղեկավարությանը ներկայացված ցանկացած հաղորդագրություն և այլ հարցեր, որոնք արտաքին աուդիտ իրականացնող անձը անհրաժեշտ է համարում քննարկել,
- ը. վերահսկել արտաքին աուդիտ իրականացնող անձի նախկին աշխատակիցներին և ծառայություններ մատուցողներին (կապալառուներին) աշխատանքի ընդունման գծով Բանկի քաղաքականության կիրառումը Բանկի գործադիր մարմնի կողմից,

**3) Ներքին հսկողության ոլորտում.**

- ա. դիտարկել Բանկի և նրա դուստր ընկերությունների ներքին ֆինանսական հսկողության (ֆինանսական ռիսկերի բացահայտման, գնահատման, կառավարման և մշտադիտարկման նպատակով ստեղծված համակարգերի) արդյունավետությունը,
- բ. դիտարկել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ ներքին հսկողության կողմից իրականացված խոշոր ստուգումների արդյունքում կատարված բացահայտումները, ղեկավարության արձագանքը, ինչպես նաև ներքին կամ արտաքին աուդիտ իրականացնող անձանց կողմից իրականացված ստուգման արդյունքները,
- գ. ուսումնասիրել ֆինանսական հաշվետվությունների (ներառյալ՝ Բանկի գործադիր մարմնի և գլխավոր հաշվապահի) կողմից Հանձնաժողովին և արտաքին աուդիտ իրականացնող անձին ներկայացված տարեկան հաշվետվությունների և կիրառելի օրենսդրությամբ և կանոնակարգերով պահանջվող այլ հաշվետվությունների) նկատմամբ ներքին հսկողության նախագծման կամ գործարկման գծով առկա բոլոր նշանակալի թերությունները և էական թույլ կողմերը, որոնք կարող են բացասաբար ազդել ֆինանսական տեղեկատվության, ինչպես նաև Բանկի գործադիր մարմնին կամ Բանկի ներքին ֆինանսական հսկողության առումով նշանակալի դեր ունեցող այլ աշխատակիցներին առնչվող ցանկացած,

	<p>Կանոնադրություն Խորհրդին կից աուդիտի հանձնաժողովի</p>	<p>Կոդ: ԿՆԿ19-01 Խմբագրություն: 01 Դաս: ՆՔ Ամսաթիվ: «27» նոյեմբերի 2024թ.</p>
---	--	---

էական կամ ոչ էական խարդախության դեպքի հաշվառման և ներկայացման՝ Բանկի կարողության վրա,

դ. դիտարկել և հավանություն տալ տարեկան հաշվետվությունում ներառվող՝ ներքին ֆինանսական հսկողությանն առնչվող հայտարարության բովանդակությանը՝ այն Խորհրդին ներկայացնելու համար:

**ԳԼՈՒԽ 7. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

**15. Հանձնաժողովը.**

- 1) պարտավոր է յուրաքանչյուր տարի վերանայել սույն կանոնադրությունը և իր սեփական գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև ստացվող տեղեկատվության որակը և Բանկի խորհրդին առաջարկություններ ներկայացնել անհրաժեշտ փոփոխությունների մասին,
- 2) պարտավոր է Խորհրդին հաշվետու լինել սույն կանոնադրությամբ սահմանված հարցերի շրջանակի, Հանձնաժողովի կողմից իր պարտականությունների պատշաճ կատարման վերաբերյալ, և ներկայացնել առաջարկություններ՝ բացահայտված խնդիրների պատշաճ կարգավորման կամ բարելավումների համար անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ,
- 3) կարող է Բանկի գործադիր մարմնից կամ աշխատակիցներից ստանալ իր կողմից պահանջվող ցանկացած տեղեկություն կամ փաստաթուղթ,
- 4) պետք է իր ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ Բանկի գործադիր մարմնի կողմից պատշաճ և ժամանակին իրազեկված, ճշգրիտ և անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովված լինի,
- 5) կարող է ներգրավել հատուկ խորհրդատուների, փորձագետների կամ այլ խորհրդատուների և օգտվել այնպիսի ռեսուրսներից (ներառյալ՝ աշխատակիցները), որոնք Հանձնաժողովը կարող է նպատակահարմար համարել,
- 6) պետք է հաշվի առնի կիրառելի ՀՀ օրենսդրությունը և կարգավորող մարմինների կանոնակարգերը:

**ԳԼՈՒԽ 8. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

16. Կանոնադրության սույն խմբագրությունն ուժի մեջ է մտնում 2024թ. նոյեմբերի 27-ից: